



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 21-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 7-րդ մասով և 43-րդ հոդվածի 3-րդ մասի 19-րդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների պահուստային ֆոնդից «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին, (5122 վարչական սարքավորումներ, 4251 շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով, հատկացնել **3954.0 հազ. ՀՀ դրամ**, որից՝

1) **100.0 հազ. ՀՀ դրամ**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի համար ջեռուցիչներ ձեռք բերելու նպատակով.

2) **1363.0 հազ. ՀՀ դրամ**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի (Մարտակերտի շրջանի վարչական տարածքը սպասարկող) դատարանի դատական նիստերի դահլիճի վերանորոգման և գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով.

3) **2491.0 հազ. ՀՀ դրամ**՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի համար տեսաձայնագրման համակարգ, սերվերի դարակ ձեռք բերելու, ինչպես նաև ԼՂՀ դատարանների արխիվի ու ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի արխիվի տեղափոխման ու վերանորոգման նպատակով:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

19 նոյեմբերի 2015թ.
ք. Ստեփանակերտ